ԱՐԴ/1138/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 հունվարի 2026 թվական | ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՐԴ/1138/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի հունվարի 19-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի նոյեմբերի 18-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 69149425 (ԱՐԴ/1138/01/25) քրեական վարույթը՝

- Զաքար Հայկայի Հայրիկյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով,

- Սուրեն Սամվելի Ավետիսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 267-րդ հոդվածի 1-ին մասով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով,

- Արմեն Արայիկի Մեժլումյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով,

- Նարինե Արարատի Ավետիսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով,

- Կոմիտաս Սենիկի Շաքարյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 267-րդ հոդվածի 1-ին մասով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով,

- Վյաչեսլավ Միհրի Մնացականյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով,

- Ալբերտ Վարդանի Հովհաննիսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով

- Լուսինե Սուրենի Ներսեսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Գ.Մանուկյան) 2025 թվականի նոյեմբերի 21-ին որոշում է կայացրել թիվ

ԱՐԴ/1138/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 25-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/1138/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Վ.Ջիվանյան) 2026 թվականի հունվարի 19-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/1138/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունվարի 21-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Զաքար Հայրիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա ստեղծել և ղեկավարել է շահադիտական դրդումներով, առանձապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպություն, մի շարք անձանց հետ համատեղ կատարել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների իրացում և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում: (…)»*[1]:

6.1. Սուրեն Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 267-րդ հոդվածի 1-ին մասով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով հանրային քրեական

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 19, թերթեր 172-177:

հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա մասնակցել է շահադիտական դրդումներով, առանձապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, մի շարք անձանց հետ համատեղ կատարել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների իրացում և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում, ինչպես նաև՝ իրացնելու նպատակով ձեռք է բերել և պահել կեղծ արտարժույթ: (…)»*[2]:

6.2. Արմեն Մեժլումյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա մասնակցել է շահադիտական դրդումներով, առանձապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, մի շարք անձանց հետ համատեղ կատարել է թմրամիջոցների իրացում և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում: (…)»*[3]:

6.3. Նարինե Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին,և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա մասնակցել է շահադիտական դրդումներով, առանձապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, մի շարք անձանց հետ համատեղ կատարել է թմրամիջոցների իրացում և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում: (…)»*[4]:

6.4. Կոմիտաս Շաքարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 267-րդ հոդվածի 1-ին մասով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա մասնակցել է շահադիտական դրդումներով, առանձապես խոշոր*

---

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 19, թերթեր 78-84:
[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 19, թերթեր 133-139:
[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 19, թերթեր 90-96:

չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, մի շարք անձանց հետ համատեղ կատարել է թմրամիջոցների իրացում, ինչպես նաև՝ իրացնելու նպատակով ձեռք է բերել, պահել և իրացրել կեղծ արտարժույթ: (…)»[5]:

6.5. Վյաչեսլավ Մնացականյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա մասնակցել է շահադիտական դրդումներով, առանձապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, մի շարք անձանց հետ համատեղ կատարել է թմրամիջոցների իրացում: (…)»*[6]:

6.6. Ալբերտ Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա մասնակցել է շահադիտական դրդումներով, առանձապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, մի շարք անձանց հետ համատեղ կատարել է թմրամիջոցների իրացում: (…)»*[7]:

6.7. Լուսինե Ներսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով և 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա մասնակցել է շահադիտական դրդումներով, առանձապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, մի շարք անձանց հետ համատեղ կատարել է թմրամիջոցների իրացում: (…)»*[8]:

7. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննարկելով պաշտպան Լ.Սիմոնյանի՝ վարույթի տարածքային ընդդատությունը

---

[5] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 19, թերթեր 117-122:
[6] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 19, թերթեր 160-164:
[7] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 19, թերթեր 148-152:
[8] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 19, թերթեր 102-106:

փոխելու վերաբերյալ միջնորդությունը, 2025 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) 2025 թվականի դեկտեմբերի 25-ին, նախնական դատաքննությունների ընթացքում, վարույթի ընդդատության հարցի քննարկման ժամանակ, պաշտպան Լիպարիտ Սիմոնյանը միջնորդել է գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ ըստ տարածքային ընդդատության, այն պատճառաբանությամբ, որ դատավարության մասակիցների կեսից ավելին բնակվում են Երևան քաղաքում: Պաշտպան Հայկազ Գալստյանը, Արսեն Սահոյանը, Ինգա Ավագյանը, Վրույր Պետրոսյանը, Հայկ Հարությունյանը և Ցոլակ Մարգարյանը միացել են ներկայացված միջնորդությանը: Հանրային մեղադրող Վ.Ղազարյանը և մեղադրյալներ Զաքար Հայրիկյանը, Ալբերտ Հովհաննիսյանը, Արմեն Մեժլումյանը, Կոմիտաս Շաքարյանը, Սուրեն Ավետիսյանը, Վյաչիսլավ Մնացականյանը, Նարինե Ավետիսյանը, Լուսինե Ներսեսյանը չեն առարկել ներկայացված միջնորդության դեմ:*

*Դատարանն արձանագրում է, որ թիվ ԱՐԴ/1138/01/25 քրեական վարույթով մեղադրական եզրակացությանը կցված՝ վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների համաձայն՝ քրեական վարույթին ներգրավված են թվով 8 մեղադրյալներ, որոնցից Զաքար Հայրիկյանի, Ալբերտ Հովհաննիսյանի, Կոմիտաս Շաքարյանի և Լուսինե Ներսեսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված է կալանքը: Զաքար Հայրիկյանը պահվում է ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿՀ-ում, Ալբերտ Հովհաննիսյանը՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, Կոմիտաս Շաքարյանը՝ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում, իսկ Լուսինե Ներսեսյանը՝ ՀՀ ԱՆ «Արովյան» ՔԿՀ-ում: Մեղադրյալներ Արմեն Մեժլումյանի, Սուրեն Ավետիսյանի, Նարինե Ավետիսյանի և Վյաչիսլավ Մնացականյանի նկատմամբ կիրառված է այլընտրանքային խափանման միջոցների համակցություն՝ համակցված տնային կալանքով, որոնցից վերջինս բնակվում է ****** ***** ****** ********, Արմեն Մեժլումյանը՝ ******* *******, իսկ Սուրեն և Նարինե Ավետիսյանները բնակվում են ***** *******: Մեղադրյալների շահերի պաշտպանությանը ներգրավված են թվով 8 պաշտպաններ, որոնցից 6-ը բնակվում են ****** *******, իսկ վարույթին ներգրավված 13 վկաներից 8-ը բնակվում են ****** *******, 3-ը՝ ******* ******, իսկ մեկական վկա բնակվում է ******* **************

*******: Այլ խոսքով՝ վարույթին ներգրավված 29 մասնավոր մասնակիցներից 17-ը, այսինքն՝ մեծամասնությունը, բնակվում են Երևան քաղաքում, մինչդեռ Արմավիրի մարզում բնակվող վարույթի մասնավոր մասնակիցների թիվը (քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հետ միասին) կազմում է 3: (…)*

Տվյալ դեպքում, թիվ ԱՐԴ/1138/01/25 քրեական վարույթով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, իսկ մյուս մասնակիցների մեծամասնությունը բնակվում են Երևան քաղաքին մոտ բնակավայրերում, ուստի Դատարանի գնահատմամբ քրեական վարույթի ողջամիտ ժամկետում քննության ապահովման տեսանկյունից քրեական վարույթի հետագա քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում իրականացնելը բխում է ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթներից, այլ նաև արդարադատության շահից:

Այսպիսով, նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը և վկաները բնակվում են Երևան քաղաքում, ինչպես նաև մեղադրյալները չեն առարկել, որ վարույթի ընդդատությունը փոխվի և այն քննվի ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում, ուստի Դատարանը գտնում է, որ պաշտպան Լիպարիտ Սիմոնյանի կողմից ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման, իսկ քրեական վարույթի ընդդատությունն անհաժեշտ է փոխել և այն ուղարկել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (…)»[9]:

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հունվարի 19-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Քրեական գործի նյութերից երևում է, որ վարույթի մասնավոր մասնակից՝ 8 մեղադրյալներից միայն երեքն են բնակվում Երևան քաղաքի տարածքում (քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հետ միասին), 8*

[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 22, թերթեր 91-95:

պաշտպանից՝ 5-ը, 13 վկայից՝ 7-ը: Այսինքն՝ վարույթի քանինը մասնակիցներից տասնհինգը բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, իսկ մյուս տասնչորսը՝ այդ տարածքից դուրս:

Վարույթի ընդդատությունը փոխելու մասին որոշման մեջ մեղադրյալ Կոմիտաս Շաքարյանի հասցեն նշվել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, մինչդեռ ըստ մեղադրական եզրակացության, ինչպես նաև վարույթի ընդդատությունը փոխելու մասին որոշումը մեղադրյալին ուղարկելու վերաբերյալ գրության՝ այն հանդիսանում է ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ն, որը Արմավիրի մարզի տարածքում է գտնվում, իսկ վկաներից Ժ.Մ.-ի հասցեն մեղադրական եզրակացության մեջ նշված է՝ «.***** **** *****, ***. ***.», սակայն Առինջ գյուղը Կոտայքի մարզի Աբովյան համայնքի տարածք է համարվում, որը հաստատվում է նաև նույն վկայի անձնագրային տվյալները պարունակող տեղեկանքից (…):*

Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ սույն գործի ընդդատությունը փոխելիս Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը ցուցաբերել է ձևական մոտեցում, արդարադատության շահի տեսանկյունից բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով չի հիմնավորվել ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը: Այս համատեքստում պետք է նշել, որ Արմավիրի մարզը Երևան քաղաքի սահմանակից մարզերից է և դատավարության մասնավոր մասնակիցների կողմից Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նստավայրեր ներկայանալու օբյեկտիվ խոչընդոտներ առկա չեն, ինչը ևս փաստում է, որ սույն գործի ընդդատությունը փոխելու անհրաժեշտության բացակայության մասին: Հետևաբար Դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ արտահայտած դիրքորոշմանը: (…)»[10]*:*

[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 22, թերթեր 154-158:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՐԴ/1138/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[11]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[12]:

---

[11] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[12] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

12. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[13]:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

13.1. Վճռաբեկ դատարանի քրեական պալատը մշտապես ընդգծել է, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

---

[13] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, իսկ մյուս մասնակիցների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքին մոտ բնակավայրերում, գտել է, որ քրեական վարույթի ողջամիտ ժամկետում քննության ապահովման տեսանկյունից քրեական վարույթի հետագա քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում իրականացնելը բխում է ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթներից, այլ նաև արդարադատության շահից[14]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ վարույթի քսանինը մասնավոր մասնակիցներից և վկաներից տասնհինգն են բնակվում Երևան քաղաքում, գտել է, որ սույն վարույթի ընդդատությունը փոխելիս Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը ցուցաբերել է ձևական մոտեցում, արդարադատության շահի տեսանկյունից բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով չի հիմնավորվել ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը:

Միևնույն ժամանակ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն ընդգծել է, որ Արմավիրի մարզը Երևան քաղաքի սահմանակից մարզերից է և դատավարության մասնավոր մասնակիցների կողմից Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայանալու օբյեկտիվ խոչընդոտներ առկա չեն[15]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան

---

[14] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[15] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը կրկնում է, որ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել միայն բացառիկ դեպքերում, **երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի** ընդդատությունը փոխելու համար առաջադրվող պայմանների առկայությունը**,** ինչպես նաև քրեական **վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից**:

Մինչդեռ, սույն դեպքում Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որևէ հիմնավորում չի ներկայացրել, թե քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելն որքանով է անհրաժեշտ արդարադատության շահի տեսանկյունից: Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, ի թիվս այլնի, հաշվի առնելով նաև սույն վարույթի մասնավոր մասնակիցների՝ պաշտպաններ Հ.Գալստյանի, Վ.Պետրոսյանի, ինչպես նաև վկա Ժ.Մ.-ի բնակության վայրերի վերաբերյալ հստակ տվյալների բացակայությունը, ընդունելի է համարում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությունը, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է փոխանցել վերոնշյալ բացառիկ հիմքերի բացակայության պայմաններում՝ **դրսևորելով խիստ ձևական մոտեցում:**

Վերոգրյալի հետ մեկտեղ, սույն վարույթի փաստական հանգամանքների գնահատմամբ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում նշել, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի ներկայացրել որևէ հիմնավոր փաստարկ առ այն, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների համար Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածք ներկայանալը կարող է խոչընդոտ հանդիսանալ կամ ազդել գործը ողջամիտ ժամկետներում քննելու առումով:

16. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից

թիվ ԱՐԴ/1138/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

17. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԱՐԴ/1138/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ